ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՀՇՏՈՒՄ

ՀԱԿՈԲ ՔՅՈՍԵՅԱՆ

Ինչպես հայտնի է, Սահակ Պարթևի Տեսիլքն ու դրա Մեկնությունը Ղ. Փարպեցու Պատմության մասն են կազմում[1]։ Մեզ հայտնի ձեռագրական բոլոր միավորներում Տեսիլքն ու Մեկնությունը ձույլ ամբողջություն կազմելով Պատմության հետ՝ միշտ հանդես են գալիս վերջինիս մեջ միասնաբար (թեև նյութի բովանդակությամբ թելադրված ներքին տրամաբանության համաձայն այդ երկու փոքրիկ հատվածները միմյանցից և նույն ժամանակ Պատմությունից ենթախորագրերով պատրաստված լինելով՝ հայտնի են նաև առանձին ընդօրինակությամբ)։

Հայագիտության մեջ, սակայն, տակավին Մ. Չամչյանից սկսած, բազմիցս կարծիքներ են հայտնվել, առաջադրվել վարկածներ՝ Տեսիլքի և Մեկնության, իբրև ինքնակա գործերի, Ղազար Փարպեցու Պատմության մեջ հետսմուտ հավելում լինելու մասին։

Հարցին նվիրված ուսումնասիրությունների շարքում բանասիրական ներհուն և համակողմանի քննությամբ աչքի է ընկնում Ն. Ակինյանի «Քննություն տեսլյան Ս. Սահակա» վերտառությամբ ընդարձակ հոդվածը[2], ուր հեղինակը նպատակադրվում է ապացուցել, թե Սահակ Պարթևի Տեսիլքն ու Մեկնությունը պարունակող «Ղազար Փարպեցվոյ Ա գրվագը ...անհարազատ է Ղ. Փարպեցվո անվան և կեղծիք մրն է Ը դարու Ա կեսին հրապարակի վրա դրված։ Ըստ այսմ այն պարագան, որ Տեսիլքս տեղ գտած է Ղ. Փարպեցվո այս գրվագին մեջ, հարկ է նկատի առնել իբրև ըմբռնում Ը դարու առաջին կեսին»[3]։ Այնուհետև «Նախնյաց վկայությունք» ենթախորագրի ներքո տայագետը բերում է միջնադարյան հայ և օտար աղբյուրներում այս կամ այն չափով Սահակի Տեսիլքի մասին ակնարկվող հատվածները, որոնց շարքում, ի դեպ, հենց սկզբից վկայաբերվում է Մ. Խորենացու Հայոց Պատմության «...ի բազում թախանձելոց նոցա հարկաւորեալ (Սահակ Պարթևը— Հ. Ք.) պատմեաց զտեսիլն, որ յառաջ քան զբազում ժամանակս երեւութացաւ նմա ի քուն ապագայիցն յայտնութիւնքս[6] սուղերը, որոնք, թվում է, որո-

---

1 «Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց և Թուղթ առ Վահան Մամիկոնեան», աշխատությամբ Գ. Տեր-Մկրտչյան և Ստ. Մալխասյան, Տփղիս, 1904, էջ 29—36։

2 Գ. Աբգարյան, Դարձյալ Սեբեոսի մասին («Բանբեր Մատենադարանի», № 10, 1971, էջ 456, ծան. 86), Պ. Մուրադյան, Հատված Ղազար Փարպեցու «Պատմությունից» («Հայագիտական հետազոտություններ», պրակ Ա, Երևան, 1974, էջ 194—204)։

3 Այս խնդրին նվիրված գրականության ցանկը տե՛ս «Հանդես ամսօրյա», 1936, էջ 470։

4 Նույն տեղում, էջ 465—479, 1937, էջ 48—87. նույնը մեկ գրքով՝ Ն. Ակինյան, Տեսիլք Ս. Սահակայ. մատենագրական-պատմական քննություն, Վիեննա, 1948.

5 «Հանդես ամսօրյա», 1936, էջ 471։

6 «Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց», Տփղիս, 1913, էջ 354, տ. 16—18։

շակի պարզություն կարող էին մտցնել խնդրի մեջ և միաժամանակ, թեկուզ մշուշոտ վկայությունը լինել այն բանի, որ Տեսիլքը (ինչպես և Մեկնությունը) V դ. (թող որ բանավոր վիճակում) արդեն այնպիսի հեղինակություն էր վայելում, որ հիշատակվում էր նույնքան հեղինակավոր ու ավելի քան ստուգապատում մի վավերագրում, որպիսին Մ. Խորենացու Հայոց Պատմությունն է։ Սակայն բանի որ Ն. Ակինյանի որդեգրած հայտնի դիրքորոշման համաձայն (որ իշխող մտայնություն էր այն օրերի հայագիտության մեջ ընդհանրապես) Մ. Խորենացին VIII—IX դդ. հեղինակ է, ապա, բնականաբար, խնդրո առարկա Տեսիլքը պետք է որ մատենագրական երկերում կենցաղավարել սկսեր առնվազն VIII դ. սկզբից միայն, մանավանդ որ նրա մասին ամենավաղ վկայությունները, ինչպես գիտնականն է պնդում, VIII դ. առաջին կեսից այն կողմ չեն անցնում[7]։ Այնուամենայնիվ աշխատության «Քննություն Տեսլյան» գլխում հեղինակը, հետևելով Հ. Դաթրճյանին[8], կտնում է, որ «Տեսիլքս յուր հարաղատ մասերուն մեջ շատ հին է համեմատությամբ Մեկնության, թերևս Ե դարու երկրորդ քառորդեն»[9]։ Հանգամանք, որ ենթադրում է «Տեսիլքի հնագույն (անանուն—Հ. Ք.) բնագիր մը—Սկզբնագիր, ասկե առաջացած Տեսիլքին նախավոր խմբագրություն մը հանդերձ վարդապետական Մեկնությամբ—Ա խմբագրություն», այնուհետև Բ խմբագրություն «վերագրված հավանորեն Դանիել Ասորվո, այս Բ խմբագրությունը մանր փոփոխությամբ վերագրված է ապա Սահակա»[10]։

Այսպիսով, ըստ Ն. Ակինյանի՝ Տեսիլքի միայն (Բ խմբագրությունից ծագած) այսպես կոչված Ա խմբագրությունն է վերագրվել Սահակին։ Առաջին երկու խմբագրություններից մեկը եղել է անանուն, իսկ մյուսը վերագրվել է Դանիել Ասորուն։ Իրողություն, որով և Սահակ Պարթևի անվամբ Տեսիլքի իր իսկ զատորոշած Ա խմբագրության երևան գալը Ն. Ակինյանը կապում է VIII դ. սկզբի հետ[11], որովհետև հենց այս խմբագրության մեջ է, որ նա 700 թ. հետո տեղի ունեցած դեպքերի կամ քաղաքական ակնկալությունների ակնարկներ է նշմարում։ Մինչդեռ, ելնելով ցարդ անուշադրության մատնված մատենագրական մի տվյալից, հարկ է ենթադրել, որ Սահակ Պարթևի Տեսիլքը Մեկնության Ա խմբագրության հետ մեկտեղ VII դ. առաջին կեսին իր իսկ անունով արդեն հայտնի մի ստեղծագործություն էր։ Խոսքը 634—645 թթ. ստեղծված՝ Հ. Մայրագոմեցու «Վերլուծութիւնք կաթողիկէ եկեղեցւոյ եւ որ ի նմայ կարգաց» աշխատության մասին է[12], ուր ի տարբերություն Մ. Խորենացու Պատմության, ոչ միայն հիշատակվում, այլև ուղղակի վկայաբերումներ են կատարվում Սահակի անվամբ առկոչվող Տեսիլքի Մեկնության Ա խմբագրությունից։ Ասվածն առավել պարզ դարձնելու համար հանդիպագրենք զուգահեռ տեղիները.

---

7 «Հանդես ամսօրյա», 1936, էջ 471—472։

8 «Մերրազան Պատարագամատոյցք Հայոց». հրատարակեալ հանդերձ յաւելուածովք ի Յակոբոսէ Տաշեան, Վիեննա, 1897, էջ 727—728։

9 «Հանդես ամսօրյա» 1937, էջ 58։

10 Նույն տեղում. էջ 58, հմմտ. էջ 67։

11 Նույն տեղում. էջ 61։

12 Գործը հրատարակվել է երկիցս՝ Կարապետ Եպիսկոպոս, Հովհան Մանդակունի և Հովհան Մայրագոմեցի («Շողակաթ». Էջմիածին, 1913, էջ 131—136) և «Միոն». 1967, № 1—2, էջ 70—75 (հրատ. Ն. Եպս. Ծովական)։

Մեկնութիւն Տեսլեան Ս. Սահակայ («Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց», նշվ. հրատ.)

Եւ բեմքն չորեքկուսի կանգնեալ որ երևեցաւ քեզ, բարձր յերկրէ մինչև յերկինս՝ հաւատն ճշմարտութեան է, որով վերանան արդարքն ի ծանրութենէ աշխարհիս կենաց ի թեթևութիւն երկնից բնակութեանն (էջ 31, տ. 30—32, էջ 32, տ. 1)։

... եթաց զմասն ինչ կտաւոյն... որ յայտնէ սրբոց իւրոց գիտութիւդ ծածկեալ աստուածութեանն իւրոյ։ Ընդ որով կայր սեղանն ոսկի ի պատուական ականց ընդելուզեալ սրբոյ երրորդութեանն ծանուցանի միասնականութիւն[13] (էջ 32, տ. 16—20)։

Յորոյ վերայ կայր սկուտեղն արծաթի. քանզի իբրև զարծաթ ընտիր և փորձ լուսափայլ յամենայն ազգս ընդունողաց սփռեալ տարածեցաւ բանն, զոր և սաղմոսերգս վարդապետէ սուրբ Հոգւովն, յասելն, թե բանք Տեառն որպէս զարծաթ ընտրեալ և փորձեալ յերկրէ (Սաղ. ԺԱ 7) (էջ 33, տ. 29—34, էջ 34, տ. 1)։

Վերլուծութիւնք կաթողիկէ եկեղեցւոյ («Սիոն», 1967, № 1—2)

Իսկ բեմին վերամբարձութիւնն ցուցանէ յամենայն աստուածային ուղղութիւնսն յերկրէ ընծայեսլս բարձր եւ կանգուն զհաւատոյ դաւանութիւն ճշմարտութեան, որով վերանան արդարքն ի ծանրութենէ աշխարհիս կենացն, ի թեթևութիւն երկնից բնակութեանն (էջ 73)։

Իսկ սուրբ սեղանն սրբոյ երրորդութեանն ծանուցանէ մեզ միասնականութիւնն, որպէս Ս. Սահակ ուսուցանէ տեսլեամբ։ Իսկ ծածկեալ զգեստիւք արժանաւորաւք՝ այս ծածկեալ իւրութիւդ ըստ ինքեան արժանի սուրբ Երրորդութեանն, որ եւ այս ցուցաւ ի տեսլեան Ս. Սահակայ (էջ 72)։

Իսկ նուիրանոցքն արծաթիք, սպասու սրբոյ սեղանոյն, այս բանք Տեառն ընտրեալ եւ փորձեալք որպէս զարծաթ, որպէս ասէ կանխաւ մարգարէն, եւ յետոյ Ս. Սահակ ուսուցանէ (էջ 72)։

Ինչպես ցույց են տալիս համապատասխան հատվածների բառացի հարաստումներն ու իմաստային մերձիմոտությունը՝ Տեսիլքի Մեկնությունը, հետևաբար և, բնական է, ինքը՝ Տեսիլքը, Հ. Մայրագոմեցու ձեռքի տակ գտնվող նրան քաջ հայտնի գործերից էր, որ Գ. Լուսավորչի Տեսիլքի հետ, որից, ի դեպ, բազմաթիվ քաղվածքներ է կատարում դավանաբան հեղինակը, կարող էր ուղեցույց դառնալ եկեղեցու, պատարագի կամ եկեղեցական այլ պարագաների խորհրդավոր նշանակությանը նվիրված «Վերլուծութիւնք կաթողիկէ եկեղեցւոյ» աշխատության համար։

Այսպիսով, ելնելով սույն և նախընթաց իրողությունից, հարկ է մտածել, որ եթե Մ. Խորենացու Պատմության մեջ Սահակի Տեսիլքի հիշատակու-

---

13 «Միասնականութիւն» ձևի դիմաց Մատենադարանի № 4803 ձեռագիրն ու «Սոփերք Հայկականք»-ը (հ. Ա, Վենետիկ, 1853, էջ 55) «Միասնական էութիւն» ընթերցումն ունեն (բնագրային ընդգծումները մերն են—Հ. Ք.)։

մը կարող էր, թերևս, բանավոր աղբյուր ունենալ, ապա Հ. Մայրագոմեցու այս գործում Տեսիլքի Մեկնությունից կաաարված ուղղակի վկայաբերումները ենթադրում են մինչև VII դ. Սահակ Պարթևի անվամբ իսկ արդեն հայտնի Տեսիլքի և Մեկնության, իբրև գրավոր ստեղծագործության, կենցաղավարում հայ մատենագրության մեջ (անկախ այն տանգամանքից, որ սրբչ այդ նրա առկայությունը Ղ. Փարպեցու Պատմության մեջ որոշ հայագետների համար մնում է տակավին տարակուսելի)։

ФИЛОЛОГИЧЕСКОЕ УТОЧНЕНИЕ

АКОП КЕСЕЯН

Резюме

Видный арменист Н. Акинян в своей работе «Исследование Видения Саака» (Вена, 1948) стремился доказать, что известное под именем Саака Партева произведение «Видение Саака Партева» было создано только в начале VIII в., так как в нем исследователь видит известные намеки на политические сдвиги, происшедшие после 700 г. Однако параллельные отрывки из произведения О. Майрагомеци (первая половина VII в.) «Объяснение (частей) кафедральной церкви и (действующих) в ней порядков» и «Толкование Видения Саака» явствуют, что «Видение Саака Партева» было известно как литературное произведение уже в начале VII в.